

Կ Ա Ր Գ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են օտարերկրյա իրավաբանական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում մասնավոր պահնորդական գործունեության իրականացման թույլտվություն (այսուհետ՝ թույլտվություն) տալու կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Օտարերկրյա իրավաբանական անձանց մասնավոր պահնորդական գործունեության իրականացման թույլտվության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Լիցենզավորման մասին», «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

3. Մասնավոր պահնորդական գործունեության թույլտվության տրամադրումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը (այսուհետ՝ ոստիկանություն):

4. Թույլտվություն ստանալու համար ոստիկանություն դիմելու իրավունք ունեն իրավաբանական անձինք:

5. Թույլտվություն ստանալու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված կարգով և չափով:

6. Թույլտվություն ստանալու համար օտարերկրյա իրավաբանական անձի տնօրենը կամ վերջինիս կողմից լիազորված պատասխանատու անձը ոստիկանություն է ներկայացնում՝

1) դիմում՝ համաձայն N 1 ձևի.

2) իրավաբանական անձի գրանցման վկայականի, կանոնադրության, ղեկավարի կամ պատասխանատու անձի անձնագրի պատճենները.

3) պետական տուրքի վճարման անդորրագիր.

4) «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 6.2-րդ մասում թվարկված պետությունների լիազոր մարմինների կողմից իրավաբանական անձանց տրված մասնավոր պահնորդական գործունեությամբ զբաղվելու իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը:

7. Օտար լեզվով կազմված փաստաթղթերին (կամ պատճեններին) կցվում են դրանց վավերացված թարգմանությունները:

8. Թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը կարող են ուստիկանություն հանձնվել առձեռն կամ փոստով:

9. Թույլտվությունը տրամադրվում կամ մերժվում է դիմումը և սույն կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացվելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում:

10. Լիազոր մարմնի ղեկավարի կողմից տրամադրվում է Հայաստանի Հանրապետության տարածքում մասնավոր պահնորդական գործունեության իրականացման թույլտվություն՝ համաձայն N 2 ձևի: Թույլտվությունը տրվում է 5 տարի ժամկետով:

11. Թույլտվության գործողության ժամկետը դիմումի և սույն կարգի 6-րդ կետով նախատեսված փաստաթղթերի հիման վրա կարող է երկարաձգվել 5 տարով:

12. Թույլտվությունն ստանալու մասին դիմումը մերժվում է, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված.

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության ու սույն կարգի պահանջներին.

3) հայտատուն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու մասնավոր պահնորդական գործունեությամբ.

4) օրենքով նախատեսված են այլ դեպքեր:

13. Թույլտվությունն ստանալու դիմումում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների,

թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիազոր մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է դիմումատուին 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները:

14. Սույն հոդվածի 12-րդ մասով սահմանված հիմքերով թույլտվությունն ստանալու դիմումը մերժվում է, եթե դրա մասին պատշաճ ձևով նախազգուշացումը լիազոր մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուն չի վերացնում հայտնաբերված ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր:

15. Թույլտվություն ստանալու դիմումը մերժվում է գրավոր, որում հստակ պետք է նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:

Ձև N 1

 (իրավաբանական անձի անվանումը)

 (գտնվելու և գործունեության իրականացման վայրերի հասցեն, հեռախոսահամարը)

 (պետական գրանցման համարը)

ԴԻՄՈՒՄ

**ՄԱՍՆԱՎՈՐ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Խնդրում եմ ինձ տալ մասնավոր պահնորդական գործունեության իրականացման թույլտվություն: Թույլտվության պայմաններին և պահանջներին ծանոթացել եմ, պարտավորվում եմ պահպանել դրանք:

Կից ներկայացնում եմ անհրաժեշտ փաստաթղթերը՝

1) _____

2) _____

Դիմումատու _____

(պաշտոնը)

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

_____ 20 թ.

Ձև N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՄԱՄՆԱՎՈՐ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Սերիա – ՄՊԳ

N _____

Իրավաբանական անձի _____

անվանումը

Գտնվելու վայրի հասցեն _____

Գործունեության իրականացման վայրը (հասցեն) _____

Գործողության ժամկետը՝ մինչև _____

ՀՀ ոստիկանության պետ _____

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Կ.Տ.

_____ 20 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ